ԷՆԵՐԳԱԽՆԱՅՈՂՈՒԹՅԱՆ ԹԵՍՏ

1. Դուք գրի՞ եք առնում էներգիայի ծախսը, վերլուծո՞ւմ եք այն:
2. Անջատո՞ւմ եք սենյակի լույսը, երբ դուրս եք գալիս:
3. Լվացքի մեքենան օգտագործելիս այն լրիվ բեռնո՞ւմ եք հագուստով:
4. Սառնարանը տեղադրվա՞ծ է զով տեղում:
5. Կահույքը չե՞ք տեղադրում ջեռուցման սարքերի առջև:
6. Օգտագործո՞ւմ եք էներգախնայող լամպեր:
7. Օգտվո՞ւմ եք տեղային լուսավորումից (սեղանի լամպ, պատին ամրացվող լուսամփոփ, հատակին դրվող պատվանդանով կանթեղ):
8. Արա՞գ եք օդափոխում սենյակը:
9. Ձմռանը ջերմամեկուսացնո՞ւմ եք պատուհանները:
10. Ձմռանը գիշերը վարագույրներով փակո՞ւմ եք պատուհանները:
11. Կերակուր պատրաստելիս կափարիչով փակո՞ւմ եք կաթսան:
12. Հաճախակի՞ եք ապասառեցնում սառնարանը:
13. Սպասքը լվանալիս ջրի ծորակը միշտ բաց չէ՞:
14. Ավելի հաճախ ցնցո՞ւղ եք ընդունում, թե՞ վաննա:
15. Դպրոց գնո՞ւմ եք ոտքով կամ հեծանվով:
16. Ձմռանը իջեցնո՞ւմ եք բնակարանի ջեռուցումը, երբ երկար ժամանակով դուրս եք գալիս:
17. Ձմռանը գիշերը ցածրացնո՞ւմ եք բնակարանի ջեռուցման ռեժիմը:
18. Կրկնակի անգամ օգտագործո՞ւմ եք թուղթը, մետաղը:
19. Չե՞ք գնում ապրանքներ, որոնք օգտագործվում են մեկ անգամ:
20. Նորը գնելու փոխարեն վերանորոգո՞ւմ եք իրերը:

Դրական պա-տասխանների թիվը	**Արդյունքը**
1-5	Դուք պետք է շատ սովորեք: Սկսեք այսօրվանից:
6-10	Դուք ունեք շատ լավ սովորություններ, որոնք լավ հիմք են այս ոլորտում ձեր հետագա ինքնակրթության համար:
11-15	Դուք լավ օրինակ եք ծառայում մյուսներին:
16-20	Ձեր փորձը առավելագույնս պետք է օգտագործեն մյուսները: